ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲԽ-ԷՍ-2018/130, 21.12.2018թ.

Բողոք բերող անձ՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցում / տպագիր նյութերի ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. թիվ 4 արձանագրությամբ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
պարոն Է.Սարգսյանին

Բողոք բերող՝ **«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան 17
հեռ: 093 949435
Էլ.փոստ՝ sam-nan@mail.ru

Պատվիրատու՝ **<<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 36ա.

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
<<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Տպագիր նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21>> ծածկագրով գնանշման հարցում

Բ Ո Ղ Ո Ք

(Շտկված)

Բողոքի նախապատմությունը և փաստերը

<<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է <<Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21>> ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին **30.11.2018թ.** մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /30.11.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 118,000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

- **<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով*** ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն 30.11.2018թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 118,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է **<<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով**:

Սակայն <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված <<Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

<<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն 30.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի միասնական

հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /30.11.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել <<Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ **Մ. Հայրապետյան**

21.12.2018թ.